ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև փոխգործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Եվրասիական տնտեսական հանձնաժողովը, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների զարգացումը,

ճանաչելով փոխշահավետ տնտեսական փոխգործակցություն զարգացնելու նպատակով երկխոսություն հաստատելու Կողմերի ձգտումը,

ձգտելով Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ-պետությունների միջև տարբեր ոլորտներում համագործակցության նոր հեռանկարների բացահայտմանը,

նշելով համաշխարհային տնտեսությանը և առհասարակ միջազգային առևտրային համակարգին ինտեգրվելու հարցերով փոխգործակցության կարևորությունը,

հիմնվելով փոխադարձ հարգանքի, թափանցիկության և բարեխղճության սկզբունքների վրա,

համաձայնեցին հետևյալի շուրջ.

1. Կողմերն իրենց իրավասության շրջանակներում կձգտեն զարգացնել փոխգործակցություն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են.

առևտրային քաղաքականություն, ներառյալ՝ առևտրային ընթացակարգերի պարզեցում,

տեխնիկական կարգավորման, ստանդարտացման, չափումների միասնության ապահովման, սանիտարական, անասնաբուժական և բուսասանիտարական պահանջների և միջոցների կիրառման հարցեր,

փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներ:

2. Կողմերը կփոխգործակցեն հետևյալ կերպ.

Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերով խորհրդատվությունների, համաժողովների, սեմինարների, սիմպոզիումների, ֆորումների և այլ միջոցառումների անցկացում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության և Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ–պետությունների գործարար հանրության ներկայացուցիչ-ների մասնակցությամբ,

տեղեկատվության (այդ թվում՝ վիճակագրական) և գաղտնի տեղեկություններ չպարունակող փաստաթղթերի, ինչպես նաև սույն հուշագրի 1-ին կետով նախատեսված ոլորտներում իրավա-հարաբերությունները կարգավորող օրենսդրության և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ տեղեկատվության փոխանակում,

փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ վերլուծական և այլ բնույթի տեղեկանքների պատրաստում,

անհրաժեշտության դեպքում համագործակցության համատեղ նախագծերի և ծրագրերի մշակում:

3.Կողմերն առնվազն տարին մեկ անգամ հանդիպումներ կանցկացնեն Հայաստանի Հանրապետության կառավարության ղեկավարի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահի մակարդակով:

Կողմերը կձգտեն հաստատել կանոնավոր կապեր Հայաստանի Հանրապետության կառավարության անդամների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամների միջև:

4.Սույն Հուշագիրը կիրառվում է ստորագրման պահից:

Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դուրս գալ սույն Հուշագրից՝ մյուս Կողմին ուղարկելով համապատասխան գրավոր ծանուցում: Այդ

դեպքում Հուշագիրը դադարում է կիրառվել մյուս Կողմի՝ ծանուցագիրը ստանալու օրվանից 3 ամիս անց:

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ:

Սույն Հուշագիրը չի հանդիսանում միջազգային պայմանագիր և չի առաջացնում միջազգային իրավունքով կարգավորվող իրավունքներ և պարտականություններ: Սույն Հուշագիրը կողմերի համար չի առաջացնում նաև որևէ ֆինանսական պարտավորություններ:

Կատարված է Երևան քաղաքում 2013 թվականի ապրիլի 10-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ ռուսերեն և հայերեն, ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից	**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից**